առաջ տանինք յաջորդ թերթին մէջ. հին եւ նոր անցքերը իրարու հետ բաղդատելու հոգը ազգասէր ընթերցողաց կը թողունք :

(Շարայարութիւնը յաջորդ ամսաթերթին մէջ :)

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԱՆԻ
ՀՈՐ ԱՐԱՔ Պ. ՀԱՆԻԿՈՎ, ՅԱՄԻՆ 1848.[1]

Ա.

Տասներինգ քսան տարիէ իվեր է որ եւրոպացի ճանապարհորդներ Անի քաղաքին աւերակները կերթան կը տեսնեն, որ Կովկաս լեռներէն անդին գտնուած երկիրներուն ուրիշ շինուածոցը պէս՝ ժամանակին մանգաղովը դեռ բոլորովին չեն փճացած : Քեր-Փորթրին Անիի վրայ ըրած փառաւոր նկարագրութենեն վերջը, անոր հայրենակիցներէն երեք հոգի, Ուիլկրահամ, Ապոթ եւ Հոլմս ետեւէ ետեւ Անի գնացին, ու երեքն ալ իրարմէ աւելի պակաս հանգամանօք այն քաղաքին աւերակաց վրայ տեղեկութիւններ հրատարակեցին. յետոյ Թեքսիէ, Ապիք եւ Մուրաւեօֆ մանրամասնաբար քննեցին զանոնք : Վենետկոյ Մխիթարեանք ալ 1847ին իրենցմէ մէկը, Հ. Ներսէս Սարգսեան, Անի ղրկեցին որ այն կոթողեալ մայրաքաղաքին յիշատակներուն վրայ գտնուած արձանագրութիւնները օրինակէ. անոր աշխատութեան հրատարակուիլը ուշանալուն պատճառ՝ անշուշտ այն քաղաքական դիպուածներն եղած են որոնցմով Մխիթարեանց գիտուն եւ բազմարդիւն միաբանութիւնը տառապեցաւ վերջի տարիներս :

Ակնէ կը տեսնուի թէ այն աւերակներն, որ ես երթալ տեսնել կուգէի՝ անծանօթ երկիր մը չեին. սակայն իմ աչքով տեսնել ուզելս՝ միայն հետաքրքրութեան համար չէր, վասն զի ինձի մասնաւոր կերպով օգտակար երեւցած բաներուն վրայ, այսինքն Անիի շինուածոցը մահմետական արձանագրութեանց տեսակին եւ թուոյն վրայ ինծմէ առաջ գնացող ուղեւորները յայտնի կերպով չեին խօսած :

Քեր-Փորթր, որ իր ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՎՐԱՍՏԱՆ, Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ եւ այլն, ըսուած մեծահատոր գրուածքին մէջ շատ տեղ ճշգրտախօս ու

[1] Այս գրուածքը ամբողջ մէջ կրթերէ Պ. Պրոսէ գաղղիացի հնագէտը, որ վրացերէն ու հայերէն լեզուաց ալ հմուտ է, իր « Ուղեւորութիւն ի Կովկաս » անուամբ գրքին մէջ : Մենք գտակար գործ մը համարեցանք ասոր բարգմանութիւնը հրատարակել բնագրին հետ մէկտեղ. որով եւ Բազմավէպին մէջ Անին վրայ գրուածները կրպարզին, եւ արժանապատիւ Մխիթարեան Աբել վարդապետին նոյն մայրաքաղաքին վրայ տուած տեղեկութիւնները կրճոխանան :

INCURSION A ANI,
PAR M. KHANIKOF EN 1848.

I.

Les ruines d'Ani, respectées par le temps plus qu'aucun autre monument de nos provinces Transcaucasiennes, ont été visitées, dans le courant des quinze ou vingt dernières années, à plusieurs reprises, par des voyageurs européens. La description pompeuse qu'en a donnée sir Ker Porter y attira l'un après l'autre trois de ses compatriotes : MM. Wilbraham, Abbott et Holms, qui tous ont publié des rapports plus ou moins circonstanciés sur l'état dans lequel ils ont trouvé ces ruines; puis MM. Texier, Abich et Mouravieff les ont examinées en détail; enfin les Mékhitaristes de Venise y ont envoyé, en l'année 1847, un des leurs, le P. Nersès Sarkisian, pour transcrire toutes les inscriptions tracées sur les monuments de cette capitale dévastée, travail dont la publication n'est probablement retardée que par les événements politiques qui ont affligé, dans ces derniers temps, le siége de cette docte et laborieuse société.

On voit par là que les ruines que je me proposais de visiter étaient bien loin d'être une *terra incognita;* toutefois ce n'était pas dans un but de pure curiosité que je désirais les voir de mes propres yeux, car aucun de mes prédécesseurs ne s'est prononcé catégoriquement sur les points qui m'intéressaient le plus, c'est-à-dire sur la nature et le nombre précis des inscriptions musulmanes des monuments d'Ani.

Ker Porter, assez exact et même minutieux dans beaucoup d'endroits de son volumineux ouvrage, *Travels in Georgia, Persia, etc.*, ne donne que peu de dé-

երբեմն աւելորդաբան ալ է, Անիի վրայ քիչ տեղեկութիւն կուտայ (Հատ. Ա., եր. 172-174) : Կըպատմէ թէ նոյեմբերի 15ին մօտ օրերը (առանց օրն որոշ կերպով ըսելու), իր կարասին յուղարկած ըլլալով այն տեղն ուր որ միտք ունէր գիշերն անցընելու, ելաւ դէպ ի Անի գնաց. երբոր առաջնորդներն ըսին իրեն թէ դեռ տասուերկու վերստ ճամբայ կայ, սկսաւ ձին վազցընել՝ որպէս զի աւերակները գննելու աւելի առեն ունենայ : Դէշ ճամբով մը, որ խորտուբորտ գետնին երեսը հազիւ թէ կերեւնար, տեղ մը հասաւ՝ ուսկից ընդարձակ դաշտի մը ծայրը հին մայրաքաղաքին աշտարակները կըտեսնուէին. ուզելով որ աւելի շուտ հասնի հոն, երկու ոտքովը ձիուն կըզարնէ, բայց յետոյ կըհասկընայ որ Անիի հարաւային եւ արեւելեան կողմերը անմատչելի են. վասն զի առջեւը խորունկ ձոր մը կայ՝ որոյ մէջէն Ար-փաչայ գետը կըվազէ : Քաղաքին հիւսիսային եւ արեւմտեան կողմերը կրկին աշտարակազարդ պարսպով պաշտպանած էին :

Հիւսիսային կողմի պատը երեք դուռ ունի կըսէ. մէջտեղինին վրայ ընձառիւծ մը կամ առիւծ մը քանդակուած է, եւ քովի աշտարակներուն վրայ մեծամեծ խաչեր կան՝ ճարտար կերպով փորագրուած : Քեր-Փորթր ներս որ մտաւ՝ քաղաքը խոշոր քարերով, սեան գլուխներու, բազմաքանդակ պսակներու, սիւներու, եւ Անիին առաջին շքեղութեան ուրիշ մնացորդաց աւերակներովը լեցուն գտաւ : Կըսէ թէ շատ եկեղեցիներ քաղաքին այլ եւ այլ կողմերը դեռ այնպէս անխախտ կեցեր են որ անոնց աւերակ ըսելը գրեթէ չվայլեր. բայց այն եկեղեցիները միայնակ միայնակ կեցած են, ինչպէս նաեւ քաղաքին ուրիշ բոլոր շէնքերը որ քիչ շատ աւրուած են ժամանակաւ : Անոյ արեւմտեան ծայրը Քեր-Փորթր Հայոց թագաւորներուն պալատը տեսաւ, եւ կըսէ թէ այն շէնքը հին մայրաքաղաքի մը փառաց արժանի շէնք է. պարսպէն կըսկսի եւ կերթայ մինչեւ մեծ ձորը, այնպէս որ գատ քաղաքի մը կընմանի : Ներսէն եւ դրսէն այնպէս ադեկ պահուած է որ անկարելի է, կըսէ ուղեւորը, պարզ սառագրութեամբ մը պատերուն զարդերուն պեսպիսութիւնն ու ճոխութիւնը, եւ անոր անհամար սենեակներուն յատակը կազմող միւսոնին ազնուութիւնը հասկըցընել :

Քեր-Փորթրին ըսածին նայելով, քաղաքին մէջտեղուանքը երկու հատ ութանկիւնի ձեւով բարձրաբերձ աշտարակներ կերեւնան, որոնց

tails sur Ani (t. I, p. 172 à 174). Il y raconte, qu'ayant expédié, à peu près le 15 novembre (sans préciser la date), ses bagages directement à l'endroit où il prétendait s'arrêter pour la nuit, il se dirigea vers Ani, et comme ses guides lui avaient dit qu'il restait encore une douzaine de verstes à parcourir, il se mit au trot pour pouvoir consacrer plus de temps à l'examen des ruines. Par une mauvaise route, à peine tracée sur un terrain ondulé, il parvint à un endroit d'où l'on apercevait, à l'extrémité d'une vaste plaine, les tours de l'ancienne cité; impatient d'y parvenir, il piqua son cheval des deux, mais gagna bientôt la triste persuasion que les côtés sud et est d'Ani sont inaccessibles, étant protégés par un profond ravin, au fond duquel coule l'Arpatchai. Les faces septentrionale et occidentale de la ville étaient défendues par un double mur flanqué de tours.

La partie du mur qui regarde le nord est percée de trois portes; celle du milieu est ornée d'une sculpture qui représente un léopard ou un lion, et sur les tours voisines on voit de grandes croix artistement sculptées. En entrant dans la ville, sir Ker Porter a trouvé toute l'enceinte comblée de pierres massives, de débris de chapiteaux, de colonnes, de corniches richement ornées de ciselures, et d'autres vestiges de l'ancienne splendeur d'Ani. Plusieurs églises, dit-il, sont encore debout en différents endroits de l'enceinte; leur état de conservation permet à peine de les appeler des ruines, mais elles s'élèvent solitairement, comme au reste tous les édifices de cette ville, tous plus ou moins rudement frappés par le temps. A l'extrémité occidentale d'Ani, sir Ker Porter a vu le palais des rois de l'Arménie, et il dit que cet édifice est digne de la gloire d'une ancienne capitale; sa longueur occupe presque tout l'espace qui sépare le mur d'un côté et le ravin de l'autre, de manière qu'il a l'air d'une ville à part; il est si bien conservé en dedans et en dehors, qu'il est impossible, dit notre voyageur, de donner par une simple description une idée de la variété et de la richesse des ornements de ses murs et de la finesse d'exécution de la mosaïque qui décore les pavés de ses innombrables salles.

Près du centre de la ville s'élèvent, d'après sir Ker Porter, deux énormes tours octogones, surmontées de tourelles ayant toutes les deux une immense hauteur.

վրայ ուրիշ երկու պզտիկ՝ բայց խիստ բարձր աշտարակներ ալ կան : Այս երկու աշտարակները բոլոր մօտակայ շէնքերէն բարձր են. նոյն իսկ միջնաբերդէն ալ որ դէպ ի հարաւային արեւմտեան կողմը կիյնայ, սեպագեայ ժայռի մը վրայ, խորանդունդ փոսի մը եզերքը : Ցետոյ

Elles dominent tous les édifices voisins et même la citadelle, qui se trouve au sud-ouest, sur un rocher escarpé, situé au bord d'un précipice. Puis sir Ker Porter se livre à l'admiration du fini des ornements architecturaux des ruines d'Ani, et même, poussant l'hyperbole un peu au delà des limites du probable, il dit que ces



Անի քաղաքին պարիսպը :

Քեր-Փորքր կրսկսի Անւոյ աւերակներուն ճարտարապետական գարդուց կատարելութեանը վրայ հիանալ, եւ չափազանցութիւնը հաւանականէն ալ անդին տանելով՝ կրսկ թէ այն գարդերը այն աստիճանի ճոխ եւ երեւելի են, որ « Թէ օտար երկիր, եւ թէ Անգղիոյ ամենէն անուանի մայր եկեղեցեաց մէջ տեսած այն տեսակ ամէն բաներէս ալ վեր են : »

Մասնաւորապէս մէկ շէնքի մը վրայ շատ կրզարմանայ՝ որուն ինքը *կրօնական* շէնք կրսկ. ուրիշ շատ շէնքերէ պզտիկ է, բայց ճարտարապետական գեղեցկութեանը համար երեւելի : Ուրանկիւնի աշտարակին շատ մօտ է, եւ իրեն բարձր գմբեթին ներսի դին միւսիոնի մնացորդ մը կայ, որուն եարտրական գեղեցկութիւնը աւելի դուրս կրցատէ զուտ ոճով շինուած շրջանակի մը տեսքովը. վասն զի այն շրջանակը սեւ, կարմիր ու դեղին քարերով ձեւացած է :

ornements sont si riches et si remarquables qu'ils « *surpassed any thing of the kind I had ever seen whether abroad, or in the most celebrated cathedrals of England.* »

Surtout il a été frappé par un édifice qu'il appelle *religieux;* il est moins grand que beaucoup d'autres, mais il se distingue par la grande beauté de son architecture. Il se trouve tout près de la tour octogone, et ses voûtes élevées présentaient un échantillon de mosaïque dont la beauté était relevée par des bordures en style du plus pur étrusque, car elles sont formées de pierres noires, rouges et jaunes. Les colonnes et tous les ornements de cet édifice sont encore si bien conservés, qu'on dirait que la construction n'en date que d'hier.

Այն շէնքին սիւներն ու բոլոր զարդերը դեռ այնպէս աղէկ պահուած են որ կարծես թէ երեկուան շէնք է :

Յետոյ Քեր-Փորթր կըսէ, նոյնպէս չափազանցութեամբ, թէ տներն, եկեղեցիները, աշտարակները, պարիսպները, մէկ խօսքով՝ թէ մեծ եւ

Puis sir Ker Porter prétend, toujours avec la même exagération, que tout, les maisons, les églises, les tours, les fortifications, enfin toutes les constructions grandes



Անւոյ մէկ դուռը :

թէ պզտիկ շէնքեր՝ ամենքն ալ սակաւագիւտ կատարելութիւն մը ունին, եւ կաւելցընէ թէ անոնց ամէն մէկուն վրայ խաչ մը կայ՝ սեւ քարէ շինուած ու պատերուն մէջ ազուցած : Այս նշանիւ քով երկայն երկայն արձանագրութիւններ գտայ, կըսէ, Հայոց հին գրովը՝ եկեղեցւոց դուռներուն վրայ փորած. անոնցմէ մէկ քանին միտք ունէի օրինակելու, բայց գիշերը վրայ հասաւ, եւ օդը սաստիկ ցուրտ ըլլալուն՝ գրիչս չէի կրնար բանեցընել : Ինչ մը յետոյ կըսէ թէ ջերմաչափը Ռեոմիւրի ջերմաչափովը գրեթէ 12 աստիճան վար կըցուցընէր : Աւերակաց նկարագրութենէն վերջը քանի մը խորհրդածութիւններ կընէ Անւոյ պարիսպներուն ամրութեանը վրայ, եւ կըսէ թէ քարաշէն գեղեցիկ կամրջի մը մնացորդները դեռ կըտեսնուին, որ առենով ձորին մէջէն անցնող գետին վրայ ձգուած էր :

Պ. Ուիլպրահամ, որ 1837ին տեսաւ Անին, իր

et petites, portent le cachet d'une rare perfection, et ajoute que l'on voit sur chacune d'elles le signe de la sainte croix, taillée en pierre noire, incrustée dans les murs. Près de cet emblème, dit-il, j'ai trouvé de longues inscriptions en vieux caractères arméniens, gravées sur les portes des églises, et je n'aurais pas manqué d'en transcrire quelques-unes si l'approche de la nuit et un froid intense ne m'avaient rendu incapable de manier le pinceau. Plus loin il dit que son thermomètre marquait 12° R. au-dessous de zéro; il finit sa description des ruines par quelques remarques sur la solidité des fortifications d'Ani et par l'observation qu'on voyait encore les restes d'un beau pont en pierre, qui jadis avait été jeté sur la rivière qui coule au fond du ravin.

M. Wilbraham, qui a visité Ani en 1837, consacre

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՎԿԱՍ, Ի ՎՐԱՍՏԱՆ ԵՒ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ըսուած գրուածքին մէջ, Անոյ ատորագրութիւնը երկու երեսի մէջ կըլմընցընէ (երես 286-288): Կըսէ թէ գլխաւոր դռնէն քաղաքը մտայ, որուն վրայ քանի մը *զարմանալի կերպով քանդակած պատկերներ* կըտեսնուին. վերջը կը-ծանուցանէ թէ ամէն տեղ խաչ կայ փորագրուած. դեռ անխախտ մնացած շէնքերը քանի մը եկեղեցիներ են, տաճկաց մզկիթ մը, շատ մը բաղնիքներ, եւ պալատ մը՝ որուն մէջ կըսեն թէ Հայոց վերջի բագատրները կըբնակէին: Բոլոր այս շէնքերը իրենց զարդարանքին ճոխութեամբը եւ գեղեցկութեամբը երեւելի են, եւ Պ. Ուիլպրահամ քանի մը կամարաձեւ յարկաց հարուստ քանդակին վրայ աւելի կըզարմանայ. բայց յայտնի է, կըսէ, թէ ասոնք հասարակաց շէնքեր են՝ ուրիշներէն աւելի հոյակապ տեսքով շինուած, եւ մասնաւորաց տները անշուշտ ասոնցմէ խեղճ տեսք մը ունեցած պիտի ըլլան: Ետքը կըսէ թէ Անիի մէջ շատ արձանագրութիւններ կան, որոնցմէ ոմանք տաճկերէն են, բայց մեծ մասը հայերէն. եւ խօսքը կըվերջացընէ՝ ըսելով թէ կործանեալ մայրաքաղաքին եկեղեցիներէն մէկուն պատին վրայ հին նկարներու մնացորդներ կան:

Պ. Ապոթ ալ նոյն տարին գնաց Անին տեսնելու, բայց իր դիտողութիւնները 1842ին հրատարակուեցան Աշխարհագրական ընկերութեան օրագրին ԺԲ մասին մէջ, ՅԻՇԱՏԱԿՔ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅՍ ՑԱՄԻՆ 1837 » վերնագրով: Իրմէ առաջ եկածներուն տուած տեղեկութեանցը վրայ քիչ բան կաւելցընէ: Անիին չորս կողմը պատող ձորերուն սեպացեալ եզերքը փորուած անձաւներուն, եւ շէնքերուն գեղեցկութեանը եւ ամրութեանը խօսք չունի կըսէ, եւ թէ « Շատ ընդարձակ հայերէն արձանագիրներ կան պատերուն վրայ, ամէնն ալ աղէկ պահուած, եւ անոնց վրայ վագրի, ձիու, եւ ձեռքը գնտաձեւ բան մը բռնող մարդու պատկերները տեսայ: » Այս անորոշ տեղեկութենէն վերջը Պ. Ապոթ կըսէ թէ չորս հինգ եկեղեցի բաւական աղէկ պահուած են, եւ անոնց պատերը հայերէն երկայն արձանագիրներով ծածկուած, որոնք օրինակելու համար քանի մը օր պէտք է: Վերջը կըսէ թէ երկու աշտարակ տեսեր է՝ Տաճկաց մինարէներու նման. անոնցմէ մէկուն վրայ հայերէն արձանագիր մը կայ, եւ անկէ վեր քանի մը տաճկի գրով գրուած բառեր, որ ըստ իւր մեկնութեանը՝ Հայոց պզտիկ թագաւորութեանը Տաճկաց

deux pages de son ouvrage intitulé *Travels in Caucasus, Georgia and Persia* (p. 286 à 288) à la description de ses ruines. Il dit qu'il est entré dans la ville par la porte principale, au-dessus de laquelle on distingue « *some curiously sculptured figures* » (!) puis il remarque que le signe de la croix se voit gravé partout, que les seuls édifices qui soient encore debout sont quelques églises chrétiennes, une mosquée turque, *plusieurs bains* (?) et un palais qu'on dit avoir été l'habitation des derniers rois de l'Arménie. Tous ces édifices se distinguent par la richesse et la beauté de leurs ornements, et M. Wilbraham admire surtout la richesse des ciselures de quelques arcades; mais il est évident, ajoute-t-il, que ce ne sont que les édifices publics qui étaient construits sur une grande échelle, et que les maisons privées devaient avoir une très-humble apparence; puis il observe qu'il y a un grand nombre d'inscriptions à Ani, dont quelques-unes sont en turk, mais la plupart sont en arménien; il finit par la remarque que l'on voit sur les murs d'une des églises de la capitale dévastée des restes d'anciennes peintures.

M. Abbott a visité Ani la même année, mais ses observations n'ont été publiées qu'en 1842, dans le XII^e^ vol. du *Journal of the Roy. Geog. Soc.*, partie II, sous le titre : *Notes on a tour in Armenia in* 1837. Il ajoute fort peu aux renseignements fournis par ses prédécesseurs; il dit (p. 214 à 216) quelques mots sur les cavernes creusées dans les bords escarpés des ravins qui entourent Ani, rend justice, en termes généraux, à la beauté et à la solidité des constructions qui sont encore debout, et puis il observe : « Il y a beaucoup de longues inscriptions arméniennes sur les murs; elles sont très-bien conservées, et j'ai remarqué au-dessus d'elles les figures d'un tigre, d'un cheval et d'un homme tenant quelque chose de sphérique dans la main; » après ce vague renseignement, M. Abbott observe que quatre ou cinq églises sont assez bien conservées, que leurs murs sont couverts de longues inscriptions arméniennes, et qu'il faudrait plusieurs jours pour les copier toutes. Puis il dit avoir vu deux tours qui ressemblaient à des minarets turks; sur l'une d'elles on aperçoit une inscription arménienne, avec quelques mots tracés en caractères turcs au-dessus du texte arménien, ce qui, selon lui, pouvait être le symbole du vasselage auquel était assujetti ce petit royaume arménien.

իշխանութեան տակ մտնելուն նշան էր :

Պ. Հոլմս, թէ որ չեմ սխալիր՝ 1845ին էր որ Անի գնաց. իր պատմութիւնը գրուած չեմ տեսած. բայց 1846ին Պաթումէն անցնելու առենս բարեհաճեցաւ ինքը Բագրատունեաց մայրաքաղաքին աւերակներուն մէջ ըրած ուղեւորութեանը վրայ ինծի բերնով քանի մը տեղեկութիւն տալ : Աւերակաց ուրուագիծը առաւ, եւ ընդարձակ նկարագրութիւն մը ըրաւ, որուն մէջ ուրիշ բաներէ զատ՝ Քեր-Փորթրին տուած տեղեկութեանց չափազանցութիւնը կըցուցընէ. բայց արեւելեան լեզուաց տեղեակ ըլլալով՝ Անիի մահմետական արձանագրութեանց ոչ ձեւին եւ ոչ բուոյն համար որոշ բան մը չկրցաւ ինծի ըսել :

Պ. Թէքսիէն կարծեմ թէ Անիին ընդհանուր մէկ տեսքը միայն հրատարակեց. բայց այս կայ որ այն պատկերը կրնար աւելի օգտակար եւ աւելի գեղատեսիլ ըլլալ, եթէ քաշելու առեն այնպիսի տեղ մը կենար՝ ուսկից բոլոր աւերակները կամ գէթ մնացած շէնքերուն մեծ մասը տեսնուէին. իսկ ինքը գոն եղեր է պատին դրսի կողմին մէկ կտորը քաշելով՝ որ նշանաւոր տեսք մը չունի :

(Շարայարութիւնը յաջորդ թերթին մէջ :)

M. Holms a été, si je ne me trompe, à Ani, en 1845; je n'ai jamais lu sa relation écrite, mais il a bien voulu me donner de vive voix, à mon passage par Batoum en 1846, quelques détails sur son excursion aux ruines de la capitale des Bagratides. Il a tracé le croquis des ruines et en a fait une description détaillée, où il prouve, entre autres, l'extrême exagération des renseignements fournis par sir Ker Porter; mais n'étant pas orientaliste, il n'a pu me dire rien de très-précis ni sur le nombre ni sur le caractère des inscriptions musulmanes d'Ani.

M. Texier, autant que je sache, n'a publié qu'une vue générale d'Ani, mais il faut convenir qu'elle pouvait être beaucoup plus instructive et même plus pittoresque, s'il avait choisi un point de vue qui lui aurait permis d'embrasser l'ensemble des ruines, ou du moins un plus grand nombre d'édifices conservés, tandis qu'il s'est borné à reproduire un pan du mur extérieur de la ville qui n'a rien de caractéristique.

(*La suite au prochain numéro.*)

ԿԵՆՑԱՂՕՊՈՒՏ ԲԱՆԲ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԻՆ ՄԱՐԴՈՒ ԵՒ ԱՄԻՆ ՀԱՄԱԿԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ. — ԱՐԳԱՍԻՔ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՅԵՒՐՈՊԱ :

Մարդս ընկերութեան համար ստեղծուած է. մինակ չկրնար երկրիս վրայ ապրիլ, միշտ ուրիշի մը կենակցութեան ու օգնութեանը կարօտ է : Մարդիկ երբոր իրարմէ զատուին ու մինակ մնան, կը տկարանան, կը մեռնին, կը փճանան. եթէ իրարու քով գան միաբանին, կուժովնան կը զօրանան, իրենց բշնամեացը կը յաղթեն, եւ շատ անգամ անոնցմէ օգուտ ալ կը քաղեն : Մարդկանց ձեռքը հիւ հնազանդ գործիքներ դարձած են անոնց կայծակը, ջուրը, հանքերը, կրակն ու գոլորշին, որ բիւրաւոր զարմանալիք կը հանեն անոնցմէ, ու վայրենի եւ կատաղի կենդանիք իրենց բնական վայրենութիւնն ու կատաղութիւնը մոռնալով՝ հեզ ու կամակատար ծառաներ կըլլան իրենց :

Ի՞նչ է այս մեծ փոփոխութեան պատճառը. ինչով է որ բնական տկարութիւնը կը փոխուի՝ զօրութիւն կը դառնայ, եւ մարդը այնուհետեւ ոչ միայն իր նմանեացը, այլ նաեւ անբան կենդանեաց ու անշունչ արարածոց կիշխէ : — Դաստիարակութեամբ է որ մարդիկ իրարու հետ միանալով ուժովցան զօրացան, մտաւոր կարողութիւններն ընդարձակուեցաւ, ու բազմացան. մէկզմէկ հոգացին մեծցուցին, իրարու ձեռք տուին եղբայրօրէն, տպիտութենէ, անգործութենէ, տկարութենէ ու անկարողութենէ հանեցին : յս դաստիարակութեան առաջին պտուղն եղաւ լեզուն, որ որչափ մտաւոր կարողութիւններն ընդարձակուեցան եւ ընկերութեան անդամոց բիւրը շատցաւ, այնչափ ալ անիկայ հարստացաւ ճոխա-